

ՔԱՆԱԹԵՐ

Հոգեւոր Աստուծոյ Աստուծոյ ՀԱՄԱՐ
"PANPÈRE" REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Journal des Eglises Evangéliques Arméniennes de France

7, Rue Papère, MARSEILLE

(Ժ. Տարի) ՅՈՒՆԻՍ 1934

(10^{me} Année) June 1934

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Զորքած ոսկորներու յարուժիւնը

Հոգ. Կեանք

Որ Անոր մարմինն է

Յաղթողները

Հոգեկան ախտեր

Հոգի՛ս

Կեսաց ածուներէն

Թուէր եւ մոլորականը

Ս. Գրական ուսումնասիրութիւն

Հրեշտակները

Ջատագվոական

Քանի մը գիտական իրողութիւններ

Կենսագրական

Աստուծոյ Մօնօ

Իմանական սիւնակ

Երկնային զգեստ

Յիսուսը տեսնել

Ջանազան լուրեր

Գ. Գ. Խ.

Ա. Օ. Փափազեան

Ա. Օ. Փափազեան

Սամուէլ Պ.

Թարգ. Ի. Յ. Աբրահամեան

Թարգ. Զ. Բ. Պուտաբեան

X X X

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերթը թէեւ, ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնածերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ չմը
անհատներու համար, այլ ամենուն, բոլորի ճշմարիտ Վանքին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւլէ յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հոյերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիւրութիւն կուտայ որ թուրքերէն գիտցող մը անկէ ալ կընայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելն Քրիստոսով:

XXXXXXXXXXXX

ԲԱՆԲԵՐԻ քաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԴԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ ղրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, Եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Ֆրանսայէ դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Le Gérant: Mr. le PASTEUR KALTENBACH

Արժնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ՛ մեռելնիւ,
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Ուրեմն ա՛լ վախճանք, որ չբլլայ թէ
Անոր հանգիստը մոռնելու խոստմունքէն որ մեզի մնացել է,
ծեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Քանզի ալ աս.
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

Ժ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1934

ԹԻԻ 6

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԶՈՐՑԱԾ ՈՍԿՈՐՆԵՐՈՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

(ԵԶԵԿ. ԼԷ. 1-14)

Վերեւ նշանակուած համարներուն մէջ Ե-
զեկիէլ մեզի կ'ընէ նկարագրութիւնը դաշտի մը,
որ ծածկուած է ոչ թէ ոսկեգոյն ու ատուք հաս-
կերու որաներով, հապա մարդու ոսկորներու
կոյտերով: Ամէն կողմ գանկե՛ր, բազկոսկրնե՛ր,
ողնասիւնե՛ր են: Ի՛նչ ահեղատեսի՛լ քըստմ-
անելի՛ տեսարան:

Մարգարէին տեսածը պատկերն էր տարա-
բաղդ Իսրայէլի: Անոր նուիրական քաղաքը՝ Ե-
րուսաղէմ, ու սրբարանը աւերակոյտերու վերած-
ուած էին, ժողովուրդին մէկ մասը խոխոզուած
էր վայրագորէն, իսկ միւսը գերի տարուած Բա-
բելոն ու ցրուած էր Եգիպտոսի ու Միջագետքի
մէջ եւ կ'ողբար, «Մեր ոսկորները չորցան, ու
մեր յոյսը կտրեցաւ, մենք կորսուած ենք» (Ե-
զեկ. ԼԷ. 11):

Այդ պատկերն է նաեւ մեր կողկոճուած ազ-
գին. Հայաստանի եւ Հիւս. Միջագետքի մէջ ա-
մէն դաշտ ոռոգուած է ու ամէն գետ ներկուած՝
մեր հարազատներու արիւնով, ամէն ձոր ծած-
կուած է մեր խղճարներու ու քոյրերու ոսկոր-
ներով եւ ամէն ծառ ու մացառ վկայ է թէ ի՛նչ
զազանութիւններ գործուեցան մեր մաքուր կոյ-
սերու ու պարկեշտ հարսներու վրայ: Իսկ մեր
վերապրողները: Անոնք ալ չորցած ոսկորներ
դարձած են իրենց բարոյական ու հոգեւոր
կեանքով: Այլեւս մեր տղաքն ու աղջիկները
չեն մարգարէանար, մեր երիտասարդները տե-
սիւքներ չեն տեսներ, ոչ ալ մեր ծերերը երազ-
ներ (Գործ. Բ. 17): Անոնց հոգին մեռած է. ուս-
տի անմահական կաթով ու կենդանի հացով սը-
նանելու տեղ՝ իրենց փորը կը լեցնեն խոզերու
կերած եղջիւրներով: Այլեւս մեր երիտասարդ-
ները չեն ոգեւորուիր քրիստոնէական հաւատ-

քով եւ չեն բոցավառուիր Յիսուսի սիրով ու յա-
ւիտենական կեանքի յուսով: Անոնց մղիչ ուժն
է դրամն ու երկրաքարչ հաճոյքները եւ ատե-
լութիւնն ու վրէժխնդրութիւնը: «Մարմնի ցան-
կութիւնը եւ աչքերու ցանկութիւնը եւ այս
կեանքին ամբարտաւանութիւնը» այնքան լեցու-
ցած են անոնց սրտերը, որ հոն այլեւս ուրիշ
տեղ մնացած չէ Հօրը սիրոյն համար (Ա. Յովհ.
Բ. 16): Եւ մեր Հափահասներն ու ծերերը: Անոնց
ներքին կեանքը ամայի՛ ու թափո՛ւր է, երազ
չունին, կտրուած է իրենց հաղորդութիւնը կե-
նաց Աղբիւրին, Աստուծոյ հետ. ուստի շարժուն
դիակներու վերածուած են: Այսպէս՝ ծեր ու ե-
րիտասարդ «յանցանքներու եւ մեղքերու մէջ
մեռած»ներ են, չորցա՛ծ ոսկորներ: Դարձուցէք
աչքերնիդ մեր զաղութներուն եւ Խորհրդային
Հայաստանի վրայ եւ ամէն կողմ նոյն բարոյական
եւ հոգեւոր մեռելութիւնը պիտի գտնէք: Ինչ ող-
բալի՛, աղիտալի՛ վիճակ: Կա՞յ յոյս մը վերա-
կենդանանալու: «Որդի մարդոյ, այս ոսկորնե-
րը կրնա՞ն կենդանանալ»:

Ահա այս հարցն է, զոր կ'ուղղէ Տէրը Եզե-
կիէլի: Մարգարէն կը տատամսի, իր խելքին
ու բնութեան դէմ կը գտնէ այս հարցը, սակայն
մէկ վայրկեան միայն. քիչ ետք անիկա կը բռն-
նէ հաւատքի ճամբան: Հաւատքով կը լուեցնէ
իր բնական դատողութիւնը, կ'անտեսէ ցուրտ ի-
րականութիւնը, աչքերը կը դարձնէ ոսկորնե-
րով ծածկուած դաշտին վրայէն դէպի յաւի-
տենական, ամենակարող ու կենսաբաշխ Արարի-
չը եւ խիզախօրէն կը պատասխանէ, «Ով Տէր
Եհովա, Դուն գիտես»: Ապա իր հաւատքին կը մի-
ացընէ հնազանդութիւնը ու կը մարգարէանայ
Աստուծոյ հրամանին համաձայն: Եւ մարգարէու-

թիւն ըրածին պէս «շարժում մը եղաւ ու ոսկորները իրարու մօտեցան, ոսկորը իր ոսկորին... անոնք ջիզերով ու միտով պատեցան ու վրայէն մորթով ձածկուեցան... շունչը անոնց մէջ մտաւ ու կենդանացան եւ իրենց ոտքերուն վրայ կայանցան ու խիստ մեծ զօրք մը եղաւ»:

Այս մարգարէութիւնը կատարուեցաւ առաջին անգամ Եգեկիէլէ 70 տարի յետոյ, երբ Տէրը կոտորեց Իսրայէլի գերութեան շղթաները, զայն իր երկիրը վերադարձուց եւ անոր պատեհութիւն տուաւ՝ վերաշինելու Երուսաղէմն ու տաճարը և վերականգնելու իբր ազգ: Այս դէպքը հաւատացեալ հրեան շատ իրաւամբ նկատեց իբր կատարումը Աստուծոյ վերոյիշեալ խոստման, իբր մեծ հրաշք մը, յարութիւն գերեզմանէն եւ վերականգնացում չորցած ոսկորներու և յուզումնալից սրտով երգեց, «Երբ Տէրը Սիօնի գերութիւնը դարձոց, երազ տեսնողներու պէս եղանք: Այն ժամանակ մեր բերանը խնդութիւնով լեցուեցաւ ու մեր լեզուն ցնծութիւնով... Տէրը մեզի համար մեծ բաներ ըրաւ» (Սաղ. ՃԻԶ. 1-3):

Իսկ իր աւելի խոր իմաստովը այս մարգարէութիւնը գէթ մասամբ⁽¹⁾ կատարուեցաւ Պէնտէկոստէի օրերուն, երբ Սուրբ Հոգին Պետրոսի եւ միւս առաքեալներուն միջոցաւ վերականգնանացուց հազարաւոր հրեաներ, որոնք փարիսեցիութեան ազդեցութեան տակ՝ դադարած էին կենդանի հաղորդակցութիւն ունենալէ Աստուծոյ հետ ու գերի եղած գրոյն ու ծերերու աւանդութեանց եւ ...րոնք ճշմարտութեամբ Աստուծոյ ծառայելու տեղ՝ կ'ուզէին զԱյն ծառայ դարձնել իրենց ազգային ու անհատական երկրաւոր, մարմնաւոր նպատակներուն: Կարճ հոգիով մե-

.....

(1) «Գէթ մասամբ» կ'ըսենք, քանզի Իսրայէլի չորցած ոսկորներու վերականգնանացումը իր կատարեալ առումով տեղի պիտի ունենայ դեռ ասկէ ետքը, Քրիստոսի երկրորդ գալուստի աւան, երբ հրեայ ժողովուրդը ամբողջութեամբ պիտի վերադառնայ իր երկիրը, պիտի վերաշինէ տաճարն ու իր քաղաքները ու պիտի վերականգնի իբր ազգ, երբ Աստուած անոնց վրայ պիտի թափէ շնորհքի ու աղօթքի հոգին եւ «անոնք իրենց խոցածին պիտի նային եւ Անոր վրայ մէկ հատիկ զաւկի վրայ ողբալու պէս պիտի ողբան» (Ձաք. ԺԲ. 10), այսինքն պիտի ապաշխարեն եւ պիտի հաւատան ու հնազանդին Յիսուսի՝ իբր իրենց Փրկչին ու Թագաւորին, եւ Աստուած անոնց Աստուած պիտի ըլլայ եւ անոնք Անոր ժողովուրդը:

ռած էին, չորցած ոսկորներու վերածուած: Բայց փչեց շունչը, Աստուծոյ Հոգին: «Անոնց մէջ մըտաւ ու կենդանացան եւ իրենց ոտքերուն վրայ կայանցան ու խիստ մեծ զօրք մը եղաւ»: Ապա անոնցմէ ոմանք արշաւեցին իրենց երկրի նեղ սահմաններէն դուրս եւ Աւետարանով աշխարհի կարեւորագոյն մէկ մասը Քրիստոսի ոտքը խոնարհեցուցին:

Բայց Սուրբ Հոգին կենդանացուցած է ոչ թէ միայն հրեայ ժողովուրդին չորցած ոսկորները, հապա Անիկա այդ հրաշքը դորձած է 4900 տարիներէ ի վեր, ինչպէս ուրիշ շատ ազգերու, նոյնպէս նաեւ մերինն վրայ: Քանի՜ քանի՜ անգամ գտնուած է մեր դժբաղդ հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը կործանման անդունդին եզերքը: Դեռ տարազրուութեան տարիներուն չէ՞ր երբ մեր թշնամիները մեզ ամէնա ալ «ողջ ողջ կլլել» կ'ուզէին ու բարձրաձայն կ'աղաղակէին, «Մէկ հայ իսկ չպիտի մնայ», եւ երբ մեր սրտցաւ հայրենասէրները հառաչանքով կ'ողբային, «Մեր ոսկորները չորցան, մեր յոյսը կտրեցաւ, մենք կորսուած ենք»: Այսու ամենայնիւ հակառակ անոնց կատաղութեան եւ մեր յուսահատութեան՝ այսօր դեռ կ'ապրի մեծ մնացորդ մը: Թէեւ անոնցմէ շատեր սովի, սուրի եւ տարափոխիկ հիւանդութեանց պատճառաւ կմախացած էին, բայց վերականգնանացան: Ուստի պէտք է մենք ալ երախտագիտօրէն ձայնակցինք Սաղմոսերգուն, «Օրհնեալ ըլլայ Տէրը, որ մեզ անոնց աղաներուն որս չտուաւ: Մեր անձերը ճնճողկներու պէս որսորդներուն որոգայթէն ազատեցան, որոգայթը կոտրեցաւ ու մենք ազատեցանք» (Սաղմ. ՃԻԴ):

Սակայն վերականգնանացման հրաշքը մեր պատմութեան ընթացքին շատ աւելի յաճախ դորձուած է մեր հոգեւոր կեանքին մէջ: Մեր հայրերը ամէնն ալ հեթանոսութեան կուռ խաւարին մէջ ծառայ էին մեղքին ու մեռած յանցանքներու մէջ: Բայց փչեց Աստուծոյ Շունչը, Հոգին, յարուց անոնցմէ բիրաւորները (ոչ թէ ամբողջ ազգը), առաջնորդեց զանոնք Թաթէոսի, Լուսաւորիչի, Սահակի ու Մեսրոպի միջոցաւ Քրիստոսի սքանչելի լսյսին եւ ըրաւ զանոնք կենդանի Աստուծոյ զաւակներ: Անկէ ի վեր յաճախ կրկնուած է նոյն հրաշքը: Քանի՜ անգամ պատահած է, երբ քրիստոնէութեան ներքին եւ արտաքին թշնամիները Յիսուսի փառաւորեալ անունը ջնջել ուզած են մեր ազգին մէջէն, եւ երբ մեր ցիր ու ցան բուռ մը հաւատացեալները Եղիայի նման գանգատիլ ստիպ-

ուած են, «Քու ուխտդ թողուցին, Քու սեղաններդ փլցուցին ու Քու մարգարէներդ սրով մեռցուցին ու միայն ես մնացեր եմ եւ իմ անձս ալ կը փնտռեն որպէսզի զանիկա վերցնեն» (Գ. Թագ. ԺԺ. 14): Բայց փչած է Աստուծոյ Հոգին եւ արթնցուցած՝ հոս Նարեկացիներ, հոն Շնորհալիներ, Լամբրոսացիներ ու Տաթեւացիներ եւ մէկ ուրիշ կողմ հայ աւետ. շարժում եւ անոնց միջոցաւ հոգեւոր կեանք պարզեւած հազարաւոր չորցած ոսկորներու:

Ուստի հիմա ալ չենք յուսահատիր: Այո, լուրջ է, շատ լուրջ մեր ազգի հոգեւոր տագնապը այս օրերուս: Կ'ապրինք հոգեվարքի մէջ: Ոեւէ ժամանակէ աւելի խոր է հոգեւոր խաւարը, մեռելութիւնը. մարդկային ու բնական միջոցներով մեր վերականգնումը անկարելի: Բայց մենք կը հաւատանք Աստուծոյ Հոգւոյն սիրոյն ու զօրութեան: Կը հաւատանք թէ Անիկա պիտի յարուցանէ մեր ժողովուրդի գէթ մէկ մասին մեռած հոգիները եւ պիտի ընէ անոնցմէ ոմանք «ընտիր աւան»ներ կրելու Քրիստոսի անունը մեր, ինչպէս նաեւ այն բոլոր ազգերուն մէջ, որոնց մէջ ցրուած կ'ապրինք այսօր: Կը հաւատանք թէ Տէրը դեռ պիտի պահէ մեր ազգը փճացումէ, քանզի Անիկա անոր մէջ ունի դեռ շատ ոչխարներ, զորս Իր փարախը պիտի հաւաքէ եւ ընտիր զօրք մը՝ նուաճելու շատ մը մուհամմետականներու հոգիներ Քրիստոսի համար: Կը հաւատանք, քանզի զիտենք թէ Աստուծոյ խորհուրդները սիրոյն ու խաղաղութեան խորհուրդներ են եւ եթէ վերայիշեալ նպատակը չունենար մեր ազգին համար, պիտի ձգէր որ փճանայ այն ահռելի փոթորիկներուն մէջ, որոնց նմանը ուրիշ եւ ոչ մէկ ազգ տեսած է եւ ողջ մնացած: Կը հաւատանք, վասնզի տարագրութեան ատեն բազմաթիւ հայեր տառապեցան, մեռան իբր մարտիրոսներ: Շիտակ է, մեր ժողովուրդին մեծամասնութիւնը մեռաւ սոսկ հայ ըլլալուն համար, բայց գտնուեցան հարիւրաւորներ ալ որոնք Աստուծոյ ճշմարիտ զաւակներն էին եւ տառապեցան ու զոհուեցան իրենց Փրկչին սիրոյն համար: Տէրը անտես չպիտի ընէ անոնց արիւնը, Տէրտիւղիանոս հայրապետին ըսածին համաձայն՝ զայն իբր սերմ պիտի գործածէ եւ պտուղ յառաջ պիտի բերէ:

Ահա՛, այդ հաւատքով զինուած՝ հայ ճշմարիտ հաւատացեալները լուռ կենալու չեն, իրենց աչքերուն քուն եւ արտեւանունքներուն նիւրհում տալու չեն, մինչեւ որ Աստուած հանէ մեր ազգին մէջէն այն անձերը, որոնք մեռած են իրենց

անձին եւ աշխարհին ու կ'ապրին միայն Անոր փառքին համար, որոնք կատարելապէս յափըշտակուած են Անոր Հոգիէն եւ հաւատարիմ ու հնազանդ ծառաներն են Անոր, կը խօսին ու կը գործեն միայն Անկէ մղուած, կերպով մը բոնադատուած, որոնք ոեւէ մարդէ աւելի խոր զգացած են մեր ազգին անհուն տառապանքը, բայց կը դիտեն զայն Աստուծոյ լուսովը ու կրնան մխիթարել ժողովուրդը Անոր մխիթարութիւնովը, որոնք Եղեկիէլի նման մէկ կողմէն կը տեսնեն սոսկալի իրականութիւնը, չորցած ոսկորները, իսկ միւս կողմէ կը հաւատան Աստուծոյ ամենակարողութեան ու սիրոյն եւ Անոր հըրամանին հնազանդելով կրնան մարգարէանալ որ «շունչը» մեռելներուն մէջ մտնէ եւ զանոնք կենդանացնէ. եւ որոնք, կարճը ըսելով, Աստուծոյ Հոգւով լեցուած մարդիկ են՝ նման հին տնտեսութեան մարգարէներուն ու նոր առաքեալներուն:

Բայց հայ հաւատացեալները Աստուծոյ այդ ընտրեալ ծառաներուն յարութեանը համար միայն աղօթելով բաւականանալու չեն: Հապա տոնք ամէն ալ, — տկարագոյնէն մինչեւ զօրաւորագոյնը — ամէն օր ինքզինքնին յանձնելու են Սուրբ Հոգւոյն, որպէսզի Անիկա զիրենք գործածէ իբր միջոց՝ կեանք տալու համար իրենց զրացիներուն, ծանօթներուն ու ազգականներուն չորցած ոսկորներուն. Ան կրնայ այդ նըպատակին ծառայեցնել մէկ անկեղծ քրիստոնեային աղօթքը, միւսին տկար բայց սիրով լեցուած խօսքը ու երրորդի մը տառապանքի մէջ ի յայտ բերուած հաւատքը, համբերութիւնը, ուրախութիւնն ու խաղաղութիւնը:

Երբ հաւատացեալը մեղքերու մէջ մեռածներուն համար ցաւ քաշելով կ'աշխատի եւ արցունքով կ'աղօթէ, իր վրայ ալ պիտի կատարուի Տէրոջ այս խոստումը, «Անոնք որ արցունքով կը ցանեն, ցնծութիւնով կը հնձեն. ան որ լալով կ'երթայ ցանելու սերմը տանելով, անշուշտ ցնծութիւնով ետ պիտի դառնայ իր ցորենի խուրձերը բերելով» (Մաղմ. ՃԻԶ. 5, 6): Եւ մեր ժողովուրդէն հոգիով շատ մը մեռեալներու, չորցած ոսկորներու վրայ ալ պիտի իրականանայ Իսրայէլի նկատմամբ ըսուած սա խօսքը. — «Ահա ես ձեր գերեզմանները պիտի բանամ ու ձեր գերեզմաններէն ձեզ պիտի հանեմ... եւ Իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ ու պիտի կենդանանաք» (Եզեկ. ԼԷ. 13, 14):

Գ. Գ. Խ.

ՀՈԳ. ԿԵԱՆՔ

ՈՐ ԱՆՈՐ ՄԱՐՄԻՆՆ Է

(J. H. Jowett)

Եկեղեցին, որ Անոր մարմինն է Փիլ. Ա. 22, 23:

Ի՞նչ սքանչելի խորհուրդ թէ Քրիստոս կը ջանայ մարմին ստանալ Իրեն հաւատացողներուն մէջ: Ի՞նչ յոյս ու սգեւորում կը ներշնչէ մեզի այս վսեմ խորհուրդը: Անիկա իրապէս կը բազմայ մեր մէջ բնակիլ: Կ'ուզէ որ Իր հոգին ըլլայ մեր շարժումներուն շարժառիթը, կեանքն ու նպատակը: Սբ. Գիրքի այս արտայայտութիւնը ծայրայեղ ոճ մը չէ միայն՝ զործածուած մատնանշելու այն հրաշալի կարելիութիւնները որ մեզի կ'սպասեն, այլ տառական ու ճշգրիտ ճշմարտութիւն մը: Այսօր ալ տակաւին Բանը մարմին ըլլալ կը ջանայ: Աստուածային Հոգին հետամուտ է գտնել մարմիններ որոնց միջոցաւ կարենայ ցուցնել Իր ճշմարտութիւնն ու շնորհքը: Անոր այս միտքի մարմնացումը եկեղեցիին մէջ սկսելու է: Ինչ նշանակութիւն որ ունէր Յիսուսի համար Իր մարմինը ասկէ երկու հազար տարի առաջ՝ նոյն նշանակութիւնը ունենալու է եկեղեցին Քրիստոսի համար: Եկեղեցին ապրելու եւ արտայայտելու է Քրիստոսը, Քրիստոսը ներկայացնելու է իր կեանքովն ու ծառայութեամբը: Եկեղեցին իր ղեմքին վրայ կը ընկնէ Քրիստոսի ղեմադրութեան: Իւրաքանչիւր ղեմ նշանակութիւն մը ունենալու է, լեցուն, լայն, աստուածային նշանակութիւն մը: Եկեղեցին Անոր մարմինն ըլլալու է: Աշխարհ եկեղեցիին մէջ տեսնելու է Տէրոջը ներկայութիւնը եւ ըզզալու Անոր առաքինութիւնն ու շնորհքի ոյժը: Ի՞նչ ջախջախիչ պահանջ, զոր փսփսալն իսկ մեծամտութիւն կը թուի: Սակայն եւ այնպէս ճշմարտութիւն է, եւ ճշմարտութիւնը կրնայ մեզ ազատ ընել: Անոր մարմնացումը կրնայ մասնակի ըլլալ մարդկային նուիրման սահմանափակութեան պատճառաւ: Տէրոջը նուիրումը կրնայ կատարեալ ըլլալ, մինչ մերինը անկատար ու մասնակի: Իջեւանին մէջ կրնայ քիչ մը տեղ գտնուիլ Անոր համար, կամ երբեք տեղ չըլլալ: Սակայն որչափ ալ որ անկատար ըլլայ այս մարմնացումը, անհերքելի ճշմարտութիւն մըն է ան: Տէր Յիսուսի շնորհքը յայտնի է Իր եկեղեցիին մէջ: Անոր սրբութիւնը կ'երեւնայ շատ մը կորովի առաքինութիւններու մէջ: Անոր սէրը կ'արտայայտուի Իրեն համար մղուած ան-

համար քաջարի պայքարներու եւ սրտագին զոհողութիւններու մէջ: Քրիստոսի կարեկցութիւնը կ'զգացուի Իրեններուն ցուցուցած արգահատանքին մէջ: Կորսուածները հետապնդելու Անոր հոգին՝ կը տեսնուի անհամար անհատներու մէջ, որ կէս գիշերին դուրս կ'ելլեն մոլորեալները փնտռելու եւ երկարատեւ խուզարկութիւններ կը կատարեն լեռներուն վրայ թափառեալները վերադարձնելու: Ճշմարիտ է թէ եկեղեցին իր շեղումներն, խորշումներն, անարդ վերաբերումներն, մոլորումներն, անհոգութիւններն եւ բազմաթիւ մեղքերն ունի, բայց եւ այնպէս ամէն անոնք որ անկեղծաբար անոր կը նային, հոն կը տեսնեն Աստուծոյ Որդւոյն ներկայութիւնն ու կեանքը: Անիկա մարմնացած կ'երեւի անհամար գեղեցիկ ու զօրաւոր նկարագիրներու մէջ: Առաքինութեամբ օժտուած իւրաքանչիւր ղեմագործ կ'արտացոլայ Անոր ղեմքին փայլը: Յարուցեալ Տէրը մարմնացած է Իր եկեղեցիին մէջ, որպէսզի անոր միջոցաւ հաւել ամէն ուրիշ բանի մէջ մարմին ստանայ: Ահա այս է Անոր մարմնացման լայնածաւալ ու վեհ նպատակը: Մարդկութիւնը իրեն մարմին կ'ընտրէ որպէսզի ան զինքը մարմնացնէ ամէն մարդկային առնչութեանց մէջ: Չարչարանաց բաժակին մինչեւ յատակը խմելով ամէն բանի մարմնացումն եղաւ: Ուրեմն մարդկային յարաբերութեան ամէն մէկ ձեւին մէջ Անիկա մարմնացած տեսնուելու է: Մարդկութեան սիրտը բաբախելու է Անոր կամքին համաձայն: Անոր հրաժառ սիրովը միայն ոգեւորուելու է մարդկութիւնը: Ինչպէս որ Անոր երկրաւոր աշխատութիւնը Իր երկնաւոր Հօրը գործը կը ներկայացնէր, նմանապէս ալ մարդկութեան ամենէն հասարակ աշխատանքը զԱյն մարմնացնելու է: Անոր Հոգիէն առաջնորդուելու է մեր առօրեայ գործը եւ Անոր իմաստութեանն ընդունելու ենք ամէն նպատակ ու խորհուրդ: Աշխատութեան ամէն մէկ ձեւին մէջ երեւնալու են Տէրոջը ղեմքին զիծերը: Գերագոյն ատեանի հրովարտակները զԱյն ներկայացնելու են: Անոնք թէ Քրիստոսի եւ թէ մեր հրովարտակներն ըլլալու են եւ գործադրուելու են, որպէսզի Անոր կամքը կատարուի երկրի վրայ, ինչպէս որ երկինքի մէջ կը կատարուի:

Ահա մարմնացման ընթացքն ու յառաջդիմութիւնը: Անոր մեր մէջ մարմին առնելով՝ մեր երկրաւոր սափորները երկնային զինիով կը լեցուին եւ Անոր Հոգիին մեր մէջ շրջան ընելով՝ մենք ինքնաբերաբար կ'արտայայտենք Անոր ճշմարտութեան ու շնորհքին ճոխութիւնը:

ՅԱՂԹՈՂՆԵՐԸ

Ո՛ր է ով մահ թու խայթոցդ, ո՛ր է ով գե-
րեզման թու յաղթութիւնդ Ա. Կոր. ԺԵ. 51-58:

Մեր փոքր գիւղի գերեզմանատան նոճիներու
մահաշունչ շուքին տակ, ուր արդէն միւս երե-
քը կը հանգչէին, Շուշանն



ալ զնոց միանալու անոնց:
Հոն, ասկէ երեք տա-
րիներ առաջ ցուրտ հողին
յանձնած էինք իրեն պէս
սրտէն տառապող, երիտա-
սարդ Մարիամ քոյրը:

Որբեւայրի մօրը սիրե-
լին եւ միակ մխիթարու-
թիւնը, սրտէն վիրաւոր եւ
մեղքի ճնշող բեռան տակ
կքած, սակայն Աստուծոյ ո-
ղորմութեան եւ Քրիստոսի
փրկութեանը կենդանի վկան, յուսով լի ժպտուն
Մարիամը. Հոգ. Ը. 33:

Մ. Յարութիւնեան
վ.ս. 5 փետ. 1931

Հազիւ երեք ամառներ անցած էին, Տէրը Մա-
րիամն կանչեց. ինչո՞ւ մեռաւ, կը հարցնէին ո-
մանք. ինչո՞ւ աւելի հոգ չտարիք, կը դատէին
ուրիշներ. չէ՞ որ հազիւ 18 դարուններ բոլորած



էր, քրոջը շատ սիրելին:

Սքանչելի ձայն ունէր.
իր հոգւոյն պէս վճիտ ու
ամբիժ, վերջին անգամ եր-
գեց «Մեծ Բժիշկը», իր ցա-
ւին մէջ այրող սրտով նա
երգեց.

«Կ'երթամ խաղաղ մինչեւ
յերկին,
Օրհնել զանունը Յիսուս»:

Յիսուս լոեց անշուշտ,
սիրեց եւ իր քովն առաւ
Մարիամը: Օրհնեա՛լ ըլլա՛յ
իր կամքը. Յոգ. ԺԷ. 24:

Մ. Թէնէքէճեան
վ.ս. 25 Ապրիլ 1934

Անոր մօտիկը կը հանգչի Արմինէն, մօրը եւ
ամենուն սիրելին, սակայն Յիսուսի աւելի սիրե-
լին. ան ալ կ'երգէր ու կը նուագէր, ընկերութիւն
էր Մարիամային. տակաւին շատ երիտասարդ ու
փափուկ՝ անողոք հիւանդութիւն մը գինքը հիւ-
ծեց. մայրը կ'ուզէր որ իր միակ մխիթարու-
թիւնը եւ յօրը ապրի, սակայն Յիսուս պէտք
ունէր Արմինէին եւ առաւ զայն. իրմէ ալ ունինք
որպէս անմոռանալի յիշատակ, «Տունն է երկինք»
երգը: Թրէյնով կը ճամբորդէինք երբ կ'երգէր

ու կը նուագէր, ճամբորդներն ալ մտիկ կ'ընէին
եւ կը ծափահարէին:

«Յիսուս իր հարսն պիտի
կանչէ,
Որ իրեն հետ Հօրն փառքն
վայլէ»:



Անշուշտ Յիսուս ալ ու-
րախացաւ, հրեշտակներ
հրճուանօք լսեցին եւ Տէրը
տարաւ զինք հոն, նոր լեզ-
ւով Գառնուկին երգը եր-
գելու. Յայտ. Ե. 9:

Արմինէ Գգիրեան
վ.ս. 9 Յուլիս 1933

Եւ հիմա, Ապրիլ 7ին Շուշանը տարինք իրենց
մօտ. թէեւ սրտի ցաւէն տառապեալ, ան ալ ա-
նուշ կ'երգէր:

Աւագ շաբթուն Տէրը կարծես վերջին պա-
տենութիւն մը տուած էր իրեն սրբոց խումբին
հետ միասին ուրախանալու:

Գիտակցաբար կը վկայէր թէ իր վերջին օ-
րերն է. «Վերջին հաղորդութիւնն է» ըսաւ: Զատ-
կի երկուշաբթին վերջին անգամ ըլլալով փա-
փաքած էր մանուկներու նուիրումը տեսնել:

Երկար ատեն իրեն հետ միասին գործող քոյ-
րեր կը վկայեն թէ որքան խաչ կրող, համբե-
րող եւ սիրող քոյր մը եղած է:

Պատրաստ էր մահուան, կը վկայէր թէ ար-
գելք մը չունի, միակ տրտ-
մութիւնը՝ իր լսողութիւնէն
զուրկ քոյրն էր, կը գուր-
գուրար անոր վրայ, եւ հի-
մա կ'ըսէր... Ի՛նչ պիտի ըլ-
լայ Սաթենիկը, երբ ես
երթամ...



Հինգ շաբթի երեկոյ-
եան երբ ժողովի երթալ կը
պատրաստուէինք, անրը-
ծութեան, մաքրութեան եւ
խոնարհութեան անուշ հո-

Շուշան Զագրեան
վ.ս. 5 Ապրիլ 1934

տը տարածող եւ իր զրտ-
նըւած շրջանակին մէջ եկեղեցիին պարմանքը
եղող սիրելի Շուշանին յանկարծական մահը լը-
սեցինք: Յորեկին պատած էր քիչ մը, շատ սի-
րելիներու հանդիպած եւ խօսած հետերսին, ժա-
մը 4ին վրան անհանգստութիւն մը եկած ըլլա-
լով քաշուած էր սենեակը, սերտած, աղօթած
էր եւ կը պատրաստուէր մահիճը մտնելու եւ
հոն ինկած էր անշունչ: Ինչպէս իր կ'անքով
շատերուն օրհնութիւն եղած էր, այնպէս ալ իր

մահովը կ'ուզէր խօսիլ, թէ Տէրը կուգայ այն-
պիսի ժամու մէջ զոր մենք չենք կարծեր»
Մատթ. ԻԴ. 44:

Այս տեղի եկեղեցիին համար առաջին ցաւ
քաշողներէն մէկը եղած է Շուշան քոյրը, շատ
անգամներ իր եւ մի քանի ընկերներուն աղօթ-
քին պտուղը վայելած եւ իմ գործիս մէջ:

Սիրտը երթալով տկարացաւ, սակայն մին-
ջեւ վերջը բարի պատերազմը պատերազմեցաւ
եւ ընթացքը կատարած ըլլալով գնաց Փրկչին
միանալու:

Այս տարի երկինքը գանձ դիզելու մասնաւոր
փափաք մը կար իր մէջը, աւելի զոհող, աւե-
լի նուիրուած կեանք մը սկսած էր ապրիլ:

Լուռ եւ հանդարտ էր իր կեանքը, այնպէս
ալ հանդարտ եղաւ իր մահը, թէեւ ինք շատ
կը փափաքէր որ Փրկչին հետ ունեցած իր սէրը
եւ անոր վստահելով աշխարհէ մեկնիլը պատ-
մելով եւ երգելով բաժնուէր որպէսզի օգտակար
ըլլար շատերուն եւ մասնաւորապէս Ամերիկա
գտնուող իր անդարձ քրոջը, որուն փրկութեան
համար շատ աղօթած էր:

Ապրիլ 7, ժամը 3 ին, հակառակ տեղացող
սաստիկ անձրեւին, բազմութեամբ լեցուած էր
ժողովասարահը, ուր դրուած էր Շուշանին հարս-
նացեալ անշունչ մարմինը: Դէմքը խաղաղ եւ
անսւշ քնացողի մը տպաւորութիւնը կը թո-
ղուր. յուզիչ արարողութենէ մը վերջ թափօրը
առաջնորդուեցաւ գերեզմանատուն, ուր կարճ եւ
տպաւորիչ արարողութենէ մը վերջ մարմինը
յանձնեցինք հողին, հոն ուր արդէն երեք քոյ-
րեր կը հանգչէին: Նոճիներ իրենց մահաշունչ
ստուէրները տարածեցին նաեւ Շուշանին վրայ:
Կը հաւատանք որ հիմա աթոռին վրայ նստո-
ղին լուսափայլ թեւերուն շուքին տակ, իրմէ
առաջ երկինք անցնող սրբոց հետ կը փառաւո-
րէ իր շատ սիրած Փրկչիչը:

Օրհնեալ ըլլայ սրբոց յիշատակը:

«Պատուական է Տէրոջը առջեւ իր սուրբե-
րուն մահը» (Սաղ. ՃԺԶ. 15):

Փօն տ'Օպէնաս

Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

.....

Մարդիկ թերահաւատ են, ո՛վ մեծագործ Տէր,
միայն կը հաւատան թէ ցորենի հատիկները կը
բուսնին, բայց մեռելոց մարմինները չեն բուս-
նիր: Եւ ինչո՞ւ, չգիտեմ, անշունչ մարմինը կը
բուսնի եւ շնչաւորը չի բուսնիր:

(Խաչի ճառ)

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՀՈԳԵԿԱՆ ԱԽՏԵՐ

Ը. ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— Այս ախտին ծագումը
շատ հին է. ըստ Աստուծոյ խօսքին Սատանան
է անոր հայրը Յովհ. Ը. 44: Մարդը սուտին
սերմը ընդունեց Սատանայէն դրախտի մէջ եւ
անկէ ի վեր կ'աճի կը շատնայ հարիւրապա-
տիկ պտուղ տալով Ծնդ. Գ. 4:

Հիւանդութեան տեսակները խիստ շատ են.
երբեմն յայտնի են իր ախտանշանները, երբեմն
ծածուկ:

Փոխանցիկ է եւ խիստ վարակիչ, իր մանրէ-
ները բոլորովին անտեսանելի եւ արագաշարժ՝
ականջի դռնէն կը մտնեն եւ սրտին ու մտքին
մէջ բոյն կը դնեն. իսկ լեզուն այս մանրէները
աւելի բազմացած կը տարածէ ամէն կողմ. ճըշ-
մարտութենէն աւելի փայլուն եւ դիւրահաւա-
տալի ըլլալուն՝ ամէն տեղ կրնայ մտնել եւ իր
աւերը գործել:

Ժառանգական ախտ մըն է Սաղ. ԾԸ. 3:

Հիւանդութիւնը աստիճանին համեմատ զա-
նազան անուններ կ'ստանայ:

1. Ամբարտաւան Սուտ Սաղ. ԼԶ. 3: Ծանօթ
եւ բորբոքած վիճակն է. այսօրուան մարդկու-
թիւնը անբուժելիօրէն վարակուած է ասկէ: Այն-
քան տարածուած է որ մարդիկ այլեւս մոռցած
են անո՞ւ մահացու ախտ մը ըլլալը: Կը քաջա-
լերեն ու կը տարածեն զայն: Օրինակներ՝ փաս-
տաբաններ, առեւտրականներ, քաղաքագէտներ,
կղերականներ, վերջապէս բոլոր գործնական աշ-
խարհը առանց անոր չեն կրնար ապրիլ եւ շար-
ժիլ. բարոյական աշխարհի հիմը քանդող եւ
վստահութիւնը յաւէտ ջնջող այս ախտը կը քա-
ջալերուի բոլորին կողմէ Սաղ. ԺԲ. 2, ԾԲ. 3:

2. Վրան գոց Սուտ: Ծածուկ ջերմի պէս վը-
տանգաւոր եւ աւերներ գործող ախտ մըն է. Այս
տեսակէն են ճշմարտութիւնը ծածկել Գործ. Ե.
4-4: Լուռ կենալ այն պարագային երբ պէտք է
ճշմարտութիւնը վկայուի: Գործ. Դ. 20: Մեր սըր-
տին խորհուրդները ծածկելու համար ընդարձակ
լեզու գործածել Բ. Կոր. Դ. 2, Սաղ. ԿԲ. 4:

3. Կրօնական կեանքի Սուտեր: Այս տեսակը
ամբարտաւան սուտի որպէս դեղ տրուած ըլլա-
լով աւելի վտանգաւոր կը դառնայ: Հետեւեալ-
ները կը յիշուին:

ա. Աստուծոյ խօսքէն դուրս վարդապետու-
թիւններ Ա. Յովհ. Դ. 7:

բ. Արտաքնապէս լաւ, ներքնապէս աղտոտ
վիճակ Մատթ. ԻԳ. 28:

գ. Անուն ունենալ կեանք չունենալ Ա. Յվ. Բ. 4:

դ. Ժողովուրդը խաբելու համար սնուտի եւ ոչ պատգամային արարողութիւններ եւ սովորութիւններ Ողբ. Բ. 14:

4. Հոգեւոր Սուտեր: Աւելի ինքնախաբէութիւն կրնայ կոչուիլ. այս կարգէն են.—

ա. Կեղծ ապաշխարութիւնք Գործ. Ը. 13, 21

բ. Կիսկատար խոստովանութիւնք Երեմ. Գ. 10,

գ. Շինծու աղօթքներ Ժող. Ե. 1-6 Ա. Յով. Ա. 6

դ. Խօսքի մէջ անհաւատարմութիւն Մատթ. Ե. 37:

ե. Կեանքէն բարձր վկայութիւններ Հոով. ԺԵ. 18, Գործ. Ե. 1-4:

Սուտը՝ քաղաքակրթութեան ժպիտը, կեղծաւորին դիմակը, կրօնաւորին շէնքը, քաղաքագէտին պատնէշն է:

Հիւանդութիւնը խիստ տարածուած ըլլալուն քրոնիկ դարձած է եւ ոչ ոք կը խորհի բուժման վրայ: Սատանան մարդկութեան դեղ մը սորվեցուցած է «սուտը սուտով բուժել»։ ցարդ գործածուած ամենասովորական դեղը այս է:

Մեր բոլոր գործերուն մէջ պիտի նշմարենք սուտի ցաւալի հետքեր, դրախտէն սկսեալ: Աստուածութեան սիրտը այրող այս ախտը միայն մահուամբ եւ հին մարդէն մերկանալով կարելի է բուժել:

Հիւանդութիւնը մասնաւոր ախտանիշներ չունի. վարակուողը սկիզբէն սրտի դող, ամջնալուզկացում եւ ներքին տազնապ կ'ունենայ, սակայն անոնք շուտով կ'անցնին, մանաւանդ սըխալ դարմանումներով. հիւանդութիւնը կը մնայ եւ կ'աճի, իսկ ախտանիշները յաւէտ կը կորսուին:

Դալով իր ցաւալի հետեւանքներուն, հետեւեալները յիշենք:

1. Կորուստ Սաղ. Ե. 6, Առակ. ԺԺ. 5:

2. Կոտորած եւ վախ Երեմ. Ծ. 36:

3. Երկինքէն զրկուիլ Յայտ. ԻԱ. 27, ԻԲ. 15:

4. Յաւիտենական դատապարտութիւն Յայտ. ԻԱ. 8:

Օգտակար եւ պատգամային դարմանը:

ա. Հին մարդը իր գործերովը մեր վրայէն հանել Կող. Գ. 9, Եփես. Դ. 25:

բ. Լեզուն զսպել Ժող. Ե. 2. Դադ. Ե. 16:

գ. Սուտի մեռնիլ Հոով. Զ. 11:

դ. Սուտէն զգուիլ Սաղ. ՃԻ. 2-4

ե. Քրիստոսի արեան վստահիլ Ա. Յովհ. Ա. 7: Երանի՛ անոնց որոնց բերանը սուտ չզըտնուի Յայտ. ԺԴ. 5:

Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

Փօն տ'Օպէնաս

ՀՈԳԻՍ(1)

Մարդոց սոսմանուած է մէկ անգամ մեռնիլ ու անկէ ետքը դատաստան: Եբր. Թ. 27

Հոգի՛ս, երբ հին դեղահիւս վըրանի մը պէս մաշուող

Այս մարմինըդ երկրաքարէ՝ արտասուքով դըրւի հող,

Ու երբ խեփորըդ կոտորի՛, քակուի տունըդ երկրաւոր,

Լուծուի դիակդ մաս առ մաս փրտութիւնով մ'ահաւոր...

Երբ աշխարհի համար դուն եւ աշխարհ ալ քեզ համար՝

Դառնայ զէրօ մը նանիր իր պերճանքով անհամար,

Երբ մարդոցմէ մոռցըլիս, դուն ալ զանոնք առ յաւէտ՝

Գիշերին մէջ անթեղուած երազներու պէս անհետ:

Դո՛ւն ով հոգիս, պիտ ապրի՛ս ու պիտ ապրիս յաւիտեան,

Զի մահ չկայ, Մահը՝ լոկ մութ բաժանում մ'է դաժան:

Հողըդ հողին տալէ վերջ՝ անմահական թեւերով,

Պիտի երթաս անպայման տեսնել զԱստուած աչքերով:

Կեանքը երբեք չմեռնիր: Կեանքը զաւակն է Կեանքին:

Կըրնան պօռալ հեզնանքով թէ՛ — պատիր հով մ'է հողին —

Թող նիւթապաշտ զիտունին հետ՝ զանկերն իսկ հանճարեղ,

Սուր ծիծաղով ուրանան զոյութիւնըդ փառայեղ:



Դո՛ւն, ով աննիւթ գոյութիւն, Արարիչիդ պէս անմահ,

Գերերկրային մարմինով, կամով եւ կամ ակամայ,

Պիտի երթաս Աստուծոյ՝ «գիտակցօրէն»

(1) Ես ինձի ուղղած եմ

ապրեւած
Կեանքիդ հաշիւը տալու, ուրախ եւ կամ
սարսափած...

Եթէ երբեք Արարչիդ մընաս յաւէտ
Թըշնամի,
Ու հաշտութեան՝ քու անգեղջ սիրտըդ երբեք
չը կամի,
Գեհենավառ լիճին մէջ պիտի երթաս
ապրելու,
Յաւերժօրէն պիտակից «յիմարութեանդ»
ահարկո՛ւ...

Բայց երբ ձեռքըդ Աստուծոյդ, սիրտդ ալ
Անոր սուրբ Սըրտին
Հանգոյցելու յօժարիս ձեռքովը Մեծ
Միջնորդին՝
Յայնժամ պիտի ապրիս դուն որպէս
զաւակ Անոր քով,
Պիտի ապրիս լոյսի մէջ անմահութեամբ
մ'ապահով...
ՍԱՄՈՒԷԼ Պ.

Լա Սիթա

ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ԹՕԼԷՐ ԵՒ ՄՈՒՐԱՑԿԱՆԸ

Տօք. Թօլէր, Սթրազպուրկի հռչակաւոր աւետարանիչը ԺԳ. դարուն ինքզինքէն շատ դժգոհ էր, թէ եւ քաղաքը կը թնդար թնոր աւետարանիչի ներքողէն:

Անիկա երկու տարի եռանդով աղօթեց, որպէսզի Աստուած իրեն մէկը ղրկէ քրիստոնէական ճշմարտութիւնը և երջանկութեան ճամբան սորվեցնելու: Օրին մէկը մեզի անծանօթ մնացած միջոցով մը, Թօլէր պատուէրը ստացաւ երթալ այսինչ եկեղեցիին դուռը, հոն հանդիպելու այն հոգեւոր առաջնորդին որ կը խնդրէր:

Ուստի հոն գնաց եւ ուրիշ մէկը չգտաւ եթէ ոչ ցաւագար մուրացկան մը. երթաղբելով թէ իրեն սորվեցնող անձը եկած չէր տակաւին, երկար ատեն սպասեց. յետոյ յիշելով որ Աստուած ամենէն անարգ սեպուածները կը գործածէ, իր խօսքը ուղղեց մուրացկանին:

—Աստուած քեզի բարի օր մը կուտայ, բարեկամ. ըսաւ անոր:

—Շնորհակալ եմ Աստուծոյն որ ես բնաւ չար օր չունիմ, պատասխանեց խեղճ մարդը:

Թօլէր զարմացաւ այս պատասխանին վրայ ու վերսկսաւ:

—Աստուած քեզի երջանիկ կեանք մը կը պարգեւէ, բարեկամ:

—Շնորհակալ եմ Աստուծոյն որ ես երբեք ապերջանիկ չեմ:

—Ինչպէ՞ս, ըսաւ Թօլէր, ի՞նչ ըսել կ'ուզես:

—Ահա- ըսաւ ան: Երբ օդը պայծառ է, գոհութիւն կուտամ Աստուծոյ և երբ կ'անձրեւէ, դարձեալ գոհութիւն կուտամ: Երբ առատութեան մէջ եմ, շնորհակալութիւն կը մատուցանեմ Անոր, երբ կարօտութեան մէջ եմ, դարձեալ շնորհակալ կ'ըլլամ, եւ քանի որ Աստուծոյ կամքը իմինս է ու ինչ որ Անոր հաճելի է, ինծի ալ հաճելի է, ալ ինչո՞ւ ապերջանիկ պիտի ըլլամ:

—Բայց ես կը մտածեմ, ըսաւ անոր Թօլէր, եթէ Աստուծոյ հաճելի թուէր քեզ դժոխք ձգել...

—Այն ատեն, ըսաւ մուրացկանը, հաւատքի բազուկով Անոր սուրբ Մարդկութիւնը պիտի բռնէի եւ սիրոյ բազուկով Անոր անճառ Աստուածութիւնը՝ ու այսպէս միացած Անոր՝ պիտի հարկադրէի զԱյն ինծի հետ դժոխք իջնել: Հոն Անոր հետ աւելի աղէկ պիտի ըլլայի, քան ուրիշ ոեւէ հոգեւոր առանց Անոր:

Թօլէր այս վսեմ պատասխանին վրայ ապշեցաւ:

—Ո՞վ ես դուն ուրեմն, հարցուց մուրացկանին, որ կրնաս այսպէս խօսիլ:

—Ես թագաւոր եմ. ըսաւ աղքատ մարդը:

—Թագաւոր, ո՞ր է ուստի քու թագաւորութիւնդ:

—Սրտիս մէջ, ըսաւ մուրացկանը: Յիսուս չըսա՞ւ թէ Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսիդին է:

—Բայց դուն ինչպէ՞ս հասած ես այս հոգեկան վիճակին:

—Աղօթքով, խոնարհութեամբ եւ Աստուծոյ հետ միութեամբ:

—Եւ ո՞ր գտար այն Աստուածը որուն այսպէս տիրացած ես:

—Հոն, ուր թողուցի բոլոր ստեղծուածները, ըսաւ մուրացկանը:

Այս տեսակցութենէն ի վեր նոր շրջան մը սկսաւ մեծ աւետարանիչին համար:

Թարգ. Ի. Յ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

Սէնթ Էթիէն

Ս. ԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

Dr. F. GODET

Դ. ՄԱՍ (Շար.)

Աստուծոյ, մարդկութեան հետ ունեցած այս գործին մէջ ինչ բաժին ունին սուրբ հրեշտակները: Անոնք միանգամայն կը կատարեն թէ՛ ականատեսի եւ թէ՛ գործոն դեր մը:

Անոնք ցնծալի ծափահարութեամբ մը ողջունած էին ստեղծագործութիւնը: Աստուծոյ որդիներուն յաղթական երգերուն եւ առաւօտեան աստղերուն ուրախութեան աղաղակներուն մէջ էր որ կ'ըսէ Յոբ, մարդը երեւցաւ երկրի վրայ: Աւելի ուշ անոնք օգնականներն ու ծառաներն եղան մարդարէներուն որոնց պաշտօնն ու տեսիլքները պատրաստեցին Փրկչին գալուստը: Անմիջապէս որ Յիսուս երեւցաւ, շրջապատեցին զԱյն նուիրեալ պատգամաւորներու նման, որք կ'ելլեն ու կ'իջնեն ըստ իր հրամաններուն. իբրեւր աստուածային միջամտութեան գործիքներ Քրիստոսական աշխարհի մէջ, ինչպէս որ Սուրբ Հոգին է ներքին շրջանակին՝ փրկութեան գործին մէջ: Յաւիտենական Զոհին մատուցման պահուն, անոնք ծռած այս անդունդին վրայ, կը ջանային չափել զայն: Վերջապէս առաջիններն են Յարութիւնը հռչակելու, ինչպէս առաջինները եղան Ծնունդն աւետելու:

Եկեղեցիի հիմնադրութենէն ի վեր, անոնց ականարկը սեւեռուն մնաց աստուածային սիրոյ այս գլուխ գործոցին վրայ: Անոնք այստեղ պաշտամունքով կը դիտեն բնութենէն գերազանց, վեց օրուայ ստեղծագործութենէն աւելի փառաւոր եւ տեւական գործ մը: «Աստուծոյ բազմատեսակ իմաստութիւնը» կ'ըսէ Պօղոս, «եկեղեցիին ձեռքով յայտնի կ'ըլլայ երկինքը եզոզ իշխանութիւններուն ու պետութիւններուն» (Եփես. Գ. 10): Այս նոր տարրին վրայ, հրեշտակները պաշտամունքով ու վերացմամբ կը դիտեն այն բազմաթիւ ճամբաները որոնցմով Հայրը Որդւոյն կը բերէ մեղաւոր սրտերը եւ կը փրկէ կորսուածը: Անոնց մէջ տօնախմբութիւն կ'ըլլայ ամէն անգամ որ Հօրը ղէմքէն անցնող անպատմելի ժպիտ մը իրենց կը յայտնէ թէ իր զաւակներէն մին որ մեռած էր, կենդանացաւ:

Այսպէս է որ դիտելով կը սորվին, կը յառաջանան, կ'ուրախանան, կուլան մերթ ուրախու-

թեամբ, մերթ ցաւելով: Բայց աւելին կ'ընեն: Ինչպէս որ գործիչներ եղան Տէրով պատմութեան մէջ, գործիչներ նաեւ եկեղեցիին մէջ: «Անոնք սպասաւորող հոգիներ են, որոնք սպասաւորութեան կը զրկուին անոնց համար որ փրկութիւն պիտի ժառանգեն» (Եբր. Ա. 14): Անոնցմէ ամենէն մեծերն ալ չեն արհամարհեր մասնաւորաբար ամենէն տկարներուն եւ հաւատացեալներուն էն պատիկներուն մօտ կենալու պաշտօնը (Մատթ. ԺԸ. 10): Ահա թէ ինչ կը յայտարարէ նոյն ինքն Յիսուս, ինչ որ սակայն մեզի իրաւունք չտար այս խօսքէն հետեւեցնելու թէ իւրաքանչիւր մարդկային էակ մասնաւորաբար իրեն կուպուած հրեշտակ մ'ունի:

Սակայն պիտի հարցնէք թէ ինչ պէտք կայ հրեշտակներու այս օգնութեան: Աստուած չէ՞ր կրնար մեզի օգնել իր նախախնամութեամբն ու ամենակարողութեամբը, առանց ստեղծեալ օժանդակներու օգնութեան դիմելու: Վստահաբար կրնար, այդպէս շարունակելու համար հարցուցէք նաեւ սակայն թէ ինչո՞ւ նորածին երախան երբ այս կեանքին մէջ կը մտնէ կը գտնէ գուրգուրալից ձեռքեր որոնք խնամք կը շռայլեն իրեն: Աստուած չէ՞ր կրնար զայն խանձարուրով պատել եւ իր գործութեամբն կերակրել: Հարցուցէք նաեւ թէ ինչո՞ւ այն մասնաւոր վտանգէն որուն ենթարկուեցաք, Աստուած ձեր կեանքը ազատեց ձեր եղբայրներէն միոյն միջոցաւ փոխան բուն իր իսկ ձեռքով: Պատճառը այն է որ Աստուած չուզէր որ այն քաղցր կապը որ երախտաւորը յաւիտենապէս կը կապէ իր Բարեբարին, միայն իր եւ մեր մէջ գտնուի: Աստուած բաւարար սիրով մ'է որ կը մերժէ միայն ինք սիրել եւ սիրուիլ: Նա այնքան կը գնահատէ իր իսկութիւնն իսկ եզոզ սէրը, որ Հկրնար իր բոլոր միջոցներով Հաշխատիլ բազմացնելու այդ սէրը իր ստեղծած արարածներուն միջեւ: Սէր է իր բոլոր ճամբաներուն նպատակը, ինչպէս իր ներգործութեանց նոյնպէս իր ետ կենալներուն մէջ: Իր սէրը բոլորին համար, բոլորին իրեն համար եւ ամէնունը բոլորին համար, ահա՛ թէ ինչ որ կը կազմէ իր իշխանութեան մեծափառութիւնը: Եւ ահա թէ ինչո՞ւ Ան կ'ուզէ որ մենք իրաւոր օգնենք նաեւ որ այս փոխադարձ օգնութեան յարաբերութիւնովը նոյնիսկ գոյութիւն ունենայ հրեշտակաց եւ մարդոց միջեւ: Այս կերպով Ան կը պատրաստէ այն պահը երբ այս երկու ցեղերը, իրարմէ շատ աւելի տարբեր քան հրեաներն ու հեթանոսները, սեղմօրէն միանան իր իշխանութեան տակ եւ կազմեն մէկ մարմին:

Ի վերջոյ, պատմութեան վախճանին, մարդոց եւ հրեշտակաց մէջ այս յարաբերութիւնը՝ հաստատուած ստեղծագործութենէն եւ զօրացած իրենց զարգացման բոլոր տեւողութեան ընթացքին, պիտի կնքուի գերագոյն ղէպով մը: Մէկ կողմէն մարդիկ «պիտի գտնեն հրեշտակները», — այսինքն սրբուած մարդիկ ապստամբ հրեշտակները — կ'ըսէ Պօղոս Ա. Կորն. 2. 3: Միւս կողմէն հրեշտակները մարդկութեան մէջ պիտի գտնեն որոմը բարի սերմէն արելով առաջինը եւ ամբարեկով վերջինը. այսպէս է որ կը հաստատէ Յիսուայ (Մատթ. ԺԳ. 39):

Եւ այսպէս, այս էականերու երկու դասակարգերն ալ մէկը միւսին միջեւ աստուածային սըրբութեան այսպէս մեծարանք մատուցանելէն ետքը, անոնց երկուքին վրայ ալ Աստուծոյ ծրագիրներուն վախճանը պիտի իրականանայ: Այն Աստուծոյ որ որոշած է «Ամէն բան Քրիստոսի մէջ ժողովել, թէ երկինքի մէջ եւ թէ երկրի վերայ եղողները» Կող. Ա. 20, Եփես. Ա. 10), մարդիկը եւ հրեշտակները պիտի ժողովէ միակ Գլուխի մը տակ: Եւ ինչպէս հին աշխարհին երկու մեծ հոսանքները, հրեաներն ու հեթանոսները յաջորդական մերձեցումներէ յետոյ ի վերջոյ միացան եկեղեցիին մէջ, այնպէս ալ էականերու այս երկու մեծ դասակարգերը, մարդիկ եւ հրեշտակներ, որոնցմէ բաղկացած է բարոյական տիեզերքը, երկարատեւ եւ բարեհաճ յարաբերութիւններէ յետոյ, պիտի հպատակին մականին Յիսուս Քրիստոսի, որ է հրեշտակներու Արարիչը, մարդոց Արարիչն ու Փրկիչը, բոլորին Տէրը:

Ուստի մեզի անկարելի կ'երեւի իբր անկարելորդ կէտ մը մէկդի դնել հրեշտակներու գոյութեան եւ գործունէութեան հաւատալը: Մենք այս հաւատքին կ'առաջնորդուինք բնութեան թելադրութիւններով, պատմութեան նմանողութիւններով եւ Ս. Գրական ուսուցմամբ: Եւ ո՞վ չպիտի զգար որ այս հայեցակէտով աստուածային զգար որ այս հայեցակէտով աստուածային գործին գետինը կ'ընդարձակուի եւ լուսոյ շերտնակը կը լայննայ մեզ համար: Ինչպէս որ աստեղագարդ երկնից տեսքը անհունօրէն կը մեծցնէ Ֆիզիքական տիեզերքի մասին մեր ունեցած հասկացողութիւնը, նոյնպէս ալ հրեշտակաց գոյութեան վրայ եղած հաւատքը անսահմանի յատկանիշը կուտայ մեր՝ Աստուծոյ թագաւորութեան մասին կազմած գաղափարին:

Ինչպէս չզգալ միեւնոյն ատեն թէ այս հաւատքը որքա՞ն յարմար է խորունկցնելու մեր զգուհները եւ սաստկացնելու մեր վախը չարին հանդէպ: Այս մեզի կ'օգնէ իւրաքանչիւն փոր-

ձութեան մէջ տեսնելու մահացու թշնամիի մը կողմէ լարուած որոգայթ մը եւ ամէն մեղքի մէջ գատորոշելու մեղսակցութիւն մը ոչ միայն ոճրապարտ՝ այլ նաեւ յիմարական, չարագործ եւ ատելի անձի մը հետ: Զպիտի՞ հասկնայինք ի վերջոյ թէ այս հաւատքը որքա՞ն կ'օժանդակէ փառաւորելու մեր Փրկչին անձն ու կը բարձրացնէ Իր գործը: Նա Իր խաչի մահովը ոչ միայն փրկած մարդոց գլուխն է, այլ նաեւ հրեշտակներունը, որոնց գոյութիւն պարզեւորած է եւ որոնք Իր փառքին մէջէն ղէպի կատարելութիւն կ'առաջնորդէ:

Զմալլելի՛ երկձայն երգ մըն էր որ հնչեց եկեղեցիին մէջ երբ առաջին անգամ հրեաներէն հաւատացեալները եւ հեթանոսներէն դարձի եկածները իրենց ձայները միացուցին երգելու նոր երգը, փրկութեան մեղեդին: Անոնցմէ մին եւ միւսը կը փառաւորէին Աստուծոյ մեծամեծ բաները բայց ամէն մէկը իր կերպով: Առաջինները մասնաւորաբար կ'օրհնէին Իր Կառավարմութիւնը, կատարուած իրենց հայրերուն եղած խոստումներուն մէջ: Երկրորդները կը հռչակէին Իր սոյրմութիւնը հանդէպ ժողովուրդներուն որոնց ոչինչ խոստացուած էր եւ որոնք հակառակ իրենց կատարեալ անարժանութեան ամէն բան ստացած էին (Հոովմ. ԺԵ. 8, 9):

Դարձեալ երկձայն, բայց աւելի ճոխ եւ վսեմ պիտի ըլլայ ընտրեալ հրեշտակներու եւ փառաւորեալ մարդոց օրհներգը, որք միաբան կը հռչակեն Աստուծոյ գործը սակայն տարբեր թօներու վրայ: Ոմանք այն հնչեղ ձայնով որուն ուժգնութիւնը ոչինչ երբեք տկարացուցած է, կը հռչակեն Բարձրեալին հաւատարմութիւնը որ ըստ քանչեւի կերպով կը պսակէ Իր կամքին հեղ եւ յարատեւ հպատակութիւնը: Եւ միւսները աւելի թաւ ձայնով մը յաւատ գապուած շեշտերով — ինչպէս կը վայելէ անոնց որոնց երգը արցունքի մէջ ծնած է, — կը փառաւորեն Իր շնորհքը որ կը ջնջէ անհատարմութիւնը եւ կը ներէ ապրտամբութեան: Առաջինները մեզի մարդոց ցոյց կուտան իրենց օրինակին մէջ, այն լուսեղէն աստիճանը որով կարելի է բարձրանալ մինչեւ Աստուած, ատանց երեք բարիքն դուրս ելլելու, հասնիլը կատարելութեան ո՛չ առանց փորձի բայց առանց անկման, իրականացնելով յառաջդիմութիւնը անմեղութեան մէջ, ու փառաւորելով սրբութիւնն ու ճշմարտութիւնը այն Աստուծոյն որ երբեք չթուլատրեր որ մեղքը անհրաժեշտ կամ ինքնին օգտակար սեպուի: Եւ միւս կողմէն մենք մարդիկս անոնց պատաս-

խանելով եւ զգայուն խոնարհութիւնով մը ցոյց տալով մեղքի ախ մուծ անդունդը ուր գահաւ զիժած էինք, բայց ուրկէ Աստուծոյ ձեռքը մեզ քաշեց անմահ հրաշքներով, այսպէս փառաբանելով անոնց աչաց առջեւ ախ շնորհքը որ «աւելի շատ եղաւ հոն ուր մեղքը շատ էր» եւ որ չարք բարիի փոխելով իրականացուց հրաշքներուն հրաշքը: Ծնունդի գիշերուան հրեշտակաց եւ հովիւներուն երգը նախերգանքը եղաւ այն հասարակաց երգին որ յայնժամ այս երկուքի ծոցէն — որ ալ մէկ ժողովուրդ պիտի կ'ազմեն — պիտի բարձրանայ, տարբեր թօներու վրայ, իբր ազատ էակներու պատմութեան վերջին խօսքը:

Օրհնութիւն Աստուծոյ եւ Գառնուկին որ Աթոռին վրայ նստած է: Ալէլուիա:

Թարգ. Զ. Բ. ՊՈԻՏԱՔԵԱՆ

Փարիզ

(վերջ)

ԶԱՏԱԳՈՎԱԿԱՆ

ՔԱՆԻ ՄԸ ԳԻՏԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԶՈՐՈՆՔ Ս. ԳԻՐԲԸ ԶԱՅՏԱՄԾ Է ՄԱՐԴՈՅ

ԳԻՏԵՐԷՆ ՀԱՐԻԻՐԱԻՈՐ ՏԱՐԻՆԵՐ ԱՌԱՋ

1.— Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ թէ երկիրը կը լորածեւ է եւ միջոցին մէջ կ'ախուսած: «(Աստուած) անդունդներուն երեսին վրայ կամար (շրջագիծ մը) կը ձգէր» Առակ. Ը. 27: (Ն. Բ. 1000): «Ինքն է (Աստուած) երկրի շրջանին (շրջանակին) վրայ նստողը» Եսայ. Խ. 22: (Ն. Բ. 700): Այսպէս ուրեմն ըստ Սուրբ Գիրքի, երկիրը շրջանակ մըն է, այսինքն կ'լորածեւ է: Գիտնականներ այս ճշմարտութիւնը կրցան հասկնալ Սբ. Գիրքի յայտարարութենէն մօտ 3000 տարիներ յետոյ միայն: Մինչեւ Կոպեռնիկոս (Յ. Տ. 1475) մարդիկ այնպէս կը հաւատային թէ երկիրը հաստատուն հիման մը վրայ կը կենար: Կարգա Յոր ԻՉ. 7 (Ն. Բ. 1500) «Անիկա (Աստուած) երկիրը ոչինչին վրայ կը կախէ»: Այս ճշմարտութիւնները առաջին անգամ Կոպեռնիկոս գտաւ, մինչդեռ Սուրբ Գիրքը անոր ծնանելէն հազարաւոր տարիներ առաջ ըսած էր այսպէս ըլլալը:

2.— Ս. Գիրքը կ'ըսէ թէ երկիր իր առանցքին վրայ կը դառնայ: Այս կէտը անհրաժեշտօրէն կը հետեւցուի Ծննդ. Ա. գլուխէն ուր ըսուած է թէ իւրաքանչիւր օր առտու եւ իրիկուն (ցորեկ ու գիշեր) ունէր. եւ ասիկա կարելի է միայն երկրի իր առանցքին վրայ դառնալովը երբ երկրա-

գունդին մէջ մը մէկ կէսը արեւին դիմաց գալով միւս կէսը խաւար կ'ըլլայ եւ այսպէս փոփոխակի:

3.— Սուրբ Գիրքը կ'ըսէ Ն. Բ. 1500ին թէ օդը ծանրութիւն ունի: «Երբ հովին (կամ օդին) ծանրութիւն կը դնէր» Յոր. ԻԸ. 25: Մինչդեռ Գալիլիոսէ (Յ. Տ. 1650) առաջ ոչ մէկ գիտնական այս իրողութիւնը գիտէր:

4.— Յոր. ԼԸ. 31ը կ'ըսէ, «Բազմաստեղին կապերը (լուսանցք՝ զուարճութիւնները) կրնա՞ն կապել, կամ Հայկին կապերը կրնա՞ն քակել»: Դարեր ամբողջ գիտնականներ կը խորհէին թէ հոս «Բազմաստեղ» անունը կը նշանակէր ծխնի (մէնթէշէ) մը, առանցք մը, մարմին մը որ կը դառնայ եւ ուրիշ մարմիններ իր հետը կը դարձնէ: Բայց այս անուան ճիշդ իմաստը վերջերք Մատլէր անունով գիտնականի մը գիւտովը հաստատուեցաւ: Ալսիօն կոչուած աստղը, որ Բազմաստեղին ամենէն փայլուն աստղն է, մեր արեգակնային դրութեան ծանրութեան կեդրոնն է եւ թէ մեր արեգակնային դրութիւնը օրական 420 000 մղոն արագութեամբ կը դառնայ Ալսիօնին շուրջ, շրջանակի մը մէջ, որ շատ մը հազար տարիներ կը պահանջէ մէկ անգամ շրջան կատարելու համար: Ասիկա կրնայ մեզի բացատրել թէ ինչո՞ւ Սուրբ Գիրքը Բազմաստեղը ծխնի մը, առանցք մը կամ սոնակ մը կը կոչէ: Սուրբ Գիրքը տիեզերքի Արարիչին բուն Գիրքն է:

5.— Յոր. ԼԸ. 12-14ը սերտելով կարելի է հետեւցնել թէ մեր երկիրը արեւին շուրջը կը դառնայ: Այս ճշմարտութիւնը մարդիկ Յորայ գրքին գրուելէն 3000 տարիներ յետոյ միայն գիտցան Կոպեռնիկոսի ըրած գիւտովը:

6.— Յ. Տ. 1650 Գալիլիոսի գիւտէն առաջ մարդիկ չէին գիտեր թէ հովը շրջաններ ունի եւ թէ անձրեւի ամպերը շոգիացած ջուրեր էին: Բայց Սուրբ Գիրքը ասկէ 2530 տարի առաջ գիտէր երբ շատ յստակ ու պարզ կերպով կը յայտարարէ այս ճշմարտութիւնները Ժող. Ա. 6, 7ի մէջ: Ինչո՞ւ համար ամէն գետերուն ծովը երթալովը տակաւին ծովը չլեցուիր», վասնզի «այն տեղը ուր գետերը կ'երթային, նորէն հոն կ'երթան», այսինքն ջուրերը ծովը թափուելէ յետոյ նորէն շոգիանալով վեր կ'երթան (այն տեղը ուր կ'երթային սովորաբար, ամէն տարի, նորէն հոն կ'երթան):

7.— 1915 Հոկտ. 5ին Տաքթըր Լի Տըլօֆօրէսթ աշխարհի յայտարարեց թէ ելեքտրական լոյսերով յառաջ բերած էր երաժշտութիւն մը՝ որուն նմանը ոեւէ նուագախումբէ չէր լըս-

ւած: Այսպէս հիմա գիտենք թէ լոյսը կրնայ երաժշտական ձայներ հանել: Բայց Սուրբ Գիրքը այս գիտական ճշմարտութիւնը յայտարարած է հազարաւոր տարիներ առաջ: «Առտուան ու իրիկուան ելքը Դուն կ'ուրախացնես» Սաղ. ԿԵ. 8: Տառացի թարգմանութեամբ «Առտուան ու իրիկուան ճառագայթումներուն երգել կուտաս»: Յոր. ԼԸ. 7ը կ'ըսէ, «Երբ առաւօտեան աստղերը մէկտեղ փառաբանութիւն կ'ընէին»: Սբ. Գրոց քննադատներ յաճախ այս համարը օրինակ կը բերէին ըսելու թէ գիտականօրէն անարժէք խօսքեր կան Ս. Գրքին մէջ. բայց հիմա անոնք կ'ամօշնան երբ գիտութիւնը կուգայ հաստատել թէ լոյսը (ուրեմն նաեւ աստղերը) երաժշտութիւն կրնայ արտադրել: Աստղերու այս երաժշտութիւնը մենք դեռ չենք կրնար լսել՝ բայց Աստուած նայ՝ եւ մենք ալ շատ չանցած կարող սիտիլըլանք զմայլիլ այս երաժշտութեամբ: Եւ արդէն երկու ֆրանսացի գիտնականներ եւ ռատիօի մասնագէտներ փորձեր կ'ընեն աստղերու լոյսին ճառագայթումները ռատիօյի եւ երաժշտութեան առնել:

8.— Երբ Լօրտ Բօս իր հսկայ հեռագիտակը հնարեց՝ առնքան զօրաւոր որ թերթ մը 20 մըլդոն հեռուէն կը կարդացուէր, այդ գործիքով մարդիկ երկիրքի երեսը քննելով հաստատեցին թէ հիւսիսային կողմը պարապութեան հսկայ միջոց մը կար ուր մէկ հատ աստղ իսկ չկար, մինչդեռ բոլոր միւս կողմերը միլիոններով աստղեր կային: Այս գիւտը մարդիկ իբր մեծ գիւտ մը ողջունեցին, մինչդեռ Սուրբ Գիրքին մէջ կը կարդանք «Անիկա հիւսիսը պարապ տեղին վերայ կը տարածէ» Յոր. ԻԶ. 7:

9.— Յոր. ԼԸ. 35ի մէջ կը կարդանք, «Կայծակները կրնա՞ն զրկել, որպէսզի երթան ու քեզի, ահա պատրաստ ենք ըսեն»: Դարերու ընթացքին անհաւատներ ծագրած են այս խօսքերը. կայծակներով պատգամներ զրկելու գաղափարը: Բայց ելեքտրականութեան համար հրեաներու գործածած միակ բանն էր կայծակը: Եւ երբ մեր օրերուն ռատիոյով (կայծակներով կամ ելեքտրականութեամբ) պատգամներ կը զրկենք՝ Սուրբ Գիրքին գիտականօրէն ներկայ գիտութիւնէն շատ աւելի յառաջացած ըլլալը կը փաստենք:

10.— Յոր. ԼԸ. 49, (լուսանցք բուն երբայեցիքէն)ը կ'ըսէ, «Լոյսին քնակած Յամբան ո՛ր է»: Նոյնիսկ թարգմանիչները սխալած են «քնակաբանը» թարգմանելով: Գիտականօրէն ասիկա որ խալ պիտի ըլլար, վասնզի լոյսը մէկ տեղի մէջ

չքնակիր, հապա կը ճամբորդէ մէկ երկվայրկեանի մէջ 186 000 մղոն ճամբայ կտրելով: Այսպէս ուրեմն Սուրբ Գիրքը որ Լուսոյ Աստուծոյն գիրքն է, չի սխալիր, (եւ չէր կրնար սխալիլ) ոեւէ մէկ բառի մէջ իսկ, ու այս գիտական ճշմարտութիւնը դարեր առաջ յայտնած է աշխարհին իմաստուններէն ու գիտուններէն շատ առաջ:

11.— Քրիստոսէ 125 տարի յետոյ ապրող Հիփփարքէս ըսաւ թէ երկիրքի վրայ 1022 աստղեր կան: Անկէ 75 տարիներ յետոյ Պտղէմայիս ըսաւ թէ ճիշդ 1026 հատ կան: Գալիլիոս առաջին գիտնականն էր որ հաստատեց թէ աստղերուն թիւը անհամար է: Բաց Ծդ. ԺԵ. 5ը եւ կարգաւ «Հիմա դէպի երկիրք նայէ ու աստղերը համարէ, եթէ զանոնք համբելու կարող ես»: Երեմ. ԼԳ. 22, «Երկիրքի զօրքերը (աստղերը) չեն համբելիր»: Աստուծոյ խօսքին ուղղակի նպատակը մեր փրկութիւնն է, բայց երբ նա կը խօսի (նոյնիսկ անուղղակի կերպով) գիտական նիւթերու վրայ՝ այդ խօսքը յաւիտեան իմաստուն եւ անսխալ է:

12.— Ուիլիըմ Հարվի գտաւ թէ արեւնը մարմինին մէջ շրջան կ'ընէ, ուստի մարմինին կեանքը արեան մէջ է: Ղեւտ. ԺԷ. 11 ի (Ն. Բ. 1400) մէջ բուն ինքն Աստուած կ'ըսէ, «Կենդանութիւնը իր արեւին մէջ է»: Ծշմարտապէս՝ գիտութեան ամէն գիւտ կուգայ աւելցնել Ս. Գիրքին անհուն արժէքը:

13.— Տակաւին քանի մը տարիներ առաջ բոլոր գիտնականներն ալ կը խորհէին թէ լուսինը արեւին նման հսկայ լուսաւոր մարմին մըն էր: Ու երբ հաստատուեցաւ թէ լուսինը ինքը չէ որ լոյս կուտայ՝ հապա արեւին լոյսը կը ցոլացնէ՝ այս գիւտը սքանչելի նորութիւն մը երեւցաւ: Իսկ արդէն Յոր. ԻԵ. 5ի մէջ կը կարդանք, «Ահա լուսինն ալ լոյս չտար»:

14.— Սուրբ Գիրքը Քրիստոսէ 700 տարի առաջ կ'ըսէ թէ մենք մեր օրերուն ինքնաշարժներ պիտի ունենանք: Նաւում Բ. 37, «Անոր պատրաստութեան օրը (Քրիստոսի երկրորդ գալստեան նախորդ օրերուն Ա. 15 եքր. եւ լուսանցք) կառքերը ջահերու լոյս պիտի ունենան... կառքերը փողոցներու մէջ պիտի կատարին, հրապարակներու մէջ իրար պիտի բաղխենք անոնց երեսոյթը ջահերու պէս պիտի ըլլայ եւ փայլակներու պէս պիտի վաղեն»: Անկէ 200 տարի առաջ թերեւս այս համարները իբր բանաստեղծական նկարագրութիւն մը սեպուէր չափազանցուած լեզուով: Բայց այսօր գիտենք թէ ինքնաշարժ արագութեան ուղիքով ժամը... մղոն է, եւ անհաւատալի չէ

եթէ շատ չանցած կրկնապատկուի: Ուստի Սուրբ Գրքին իւրաքանչիւր բառը թանձրացեալ, տառացի, իրական եւ իրաւական ճշմարտութիւն է:

15. — Ծննդ. Բ. 21ը կ'ըսէ, «Տէր Աստուած խորունկ քուն մը բերաւ Ադամի վրայ ու անիկա քնացաւ եւ անոր կողին ոսկորներէն մէկը առաւ ու անոր տեղը միս լեցուց»: Սըր Ճէյմս Սիմփսըն կ'ըսէ թէ այս համարը կարգալով հետեւցուց թէ Աստուած շատ աւելի լաւ գիտէր թէ վիրաբուժական գործողութիւն մը ինչպէս կատարուելու է, եւ ասիկա զայն առաջնորդեց քըլօրօֆօրմի գիւտը ընել որուն միջոցով մարդը խորունկ քունով մը կը քնացնեն եւ գործողութիւնը կ'ընեն առանց անոր զգացնելու:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԱՏՈՒՅ ՄՕՆՕ

ՔՈՒՐԱՅԻ ՄԷՋ ՓՈՐՁՈՒԱԾ

ԸՆՏԻՐ ՈՍԿԻՆ

Երբ Մօնօ Փարիզի մէջ իր պաշտօնին սկսաւ արդէն գոյութիւն ունէր իր մէջ երիկամունքի ծանր հիւանդութեան մը սաղմը, որ 9 տարուան ընթացքին հետզհետէ աճեցաւ: Մօնօ աշխատեցաւ օգափոխութեան եւ ուրիշ միջոցներով իր առողջութիւնը վերագտնել, բայց ի զո՛ւր: Հիւանդութիւնը իններորդ տարուան մէջ շատ ծանրացաւ եւ վերջապէս լուրջ քննութենէ մը յետոյ բժշկները յայտարարեցին թէ երիկամունքները քայքայման մէջ են եւ անարժէք է բժշկական ուսէ միջոց: Իր անձնատուութիւնը Աստուծոյ կամքին՝ Մօնօ հետեւեալ աղօթքով արտայայտեց. —

«Աստուած իմ, եթէ կ'ուզես զիս Գեղի կանչել, գիտեմ թէ որու եմ հաւատացեր: Եթէ իմ հայրենիքս գալու ժամը հնչած է, ատոր համար իմ սրտիս խորերէն շնորհակալութիւն պիտի մատուցանեմ Քեզի, քանզի ես գիտեմ թէ ինծի համար աւելի լաւ է որ աշխարհը ձգեմ ու Հօրը զամ: Ան որ քեզի կը հաւատայ, թէեւ մեռնի պիտի ապրի... ես լաւ գիտեմ թէ Քու շնորհացդ զործը իմ հոգւոյս մէջ դեռ տկար ու անկատար է: Բայց գիտեմ նաեւ թէ եթէ տակաւին երկար տարիներ ալ չարչարանքով աշխատիմ, դեռ հեռի պիտի մնամ աստուածային տիպարէն: Սակայն ես գիտեմ թէ լուացուած մաքրուած եմ Քրիստոսի արիւնով եւ իմ մարմինս տաճարն է

Սուրբ Հոգւոյն...: Բայց իմ Տէրս եւ Աստուածս, արդեօք լրացած է իմ օրուան գործս այս աշխարհի մէջ: Ատ միայն Դուն գիտես: Ինծի կը թուի թէ դեռ շատ լրացնելիք բաներ կան...: Սակայն եթէ Դուն զիս կանչել կուզես, զայդ պիտի նկատեմ նշան մը թէ Քու աչքերուդ առջև իմ պարտականութիւնս երկրի վրայ իր վախճանին հասած է: Իմ մէջս Քու կամքդ թող կատարուի, Քու խաղաղութիւնդ թող հանգչի իմ տանս վրայ»:

Ապա իր գործերը կարգադրեց, այնպէս որ պատրաստ էր թէ՛ մեռնելու եւ թէ՛ ապրելու: Բայց Աստուած իր այս ծառան ոչ բժշկեց եւ ոչ ալ Իրեն կանչեց անմիջապէս: Հապա զայն Յորի նման օրինակ մը ըրաւ համբերութեան ու հաւատքի: Իր ցաւերուն մէջ ու անոնց միջոցաւ ալ Մօնօ ծառայեց իր սիրելի Փրկչին:

Յիսնակի ատեններն էր վերել ակնարկուած բժշկական քննութիւնը, եւ անկէ ետք դեռ 6 ամիս ալ մինչեւ Պէնտէկոստէ նա մնաց իր պաշտօնին վրայ իր կրտսեր եղբօր աջակցութեամբ, նման դրօշակիրի մը, որ թէեւ մահացու վէրք մը ստացած՝ մինչեւ վերջին շունչը զինուորներուն առջև բարձր կը բռնէ դրօշակը եւ զանոնք կռուի կը խրախուսէ:

1855ի Հոգեգալուստին ստիպուեցաւ վերջապէս համայնքին իր հրաժեշտի քարոզը խօսիլ եւ քաշուիլ իր անկողինը: Եկեղեցւոյ բեմէն իր վերջին խօսքերն եղան «Որքան որ զիւրաբեկ ու տրկար եմ, այսուամենայնիւ մասնաւոր վստահութիւն մը ունիմ թէ ինծի վերապահուած է վարելու թերեւս մինչեւ հիմա ունեցածէս աւելի օրհնալից պաշտօն մը, որուն զիս Տէրը նախապատրաստել կ'ուզէ տառապանքի միջոցաւ: Այո՛, իմ սիրելի ու թանկագին բարեկամներս, հաստատօրէն կը հաւատամ թէ իմ հիւանդութիւնս Աստուծոյ փառքին պիտի ծառայէ եւ աւելի ատակ պիտի ընէ գործելու Տէրոջ համար, խնդիր չէ թէ ես ապաքինիմ թէ ոչ: Ես իմ զժնդակ առանձնութեանս մէջ միշտ այդ բանին համար պիտի խնդրեմ: Ինծի համար ձեր ալ աղօթքը միշտ այդ թող ըլլայ»:

Մօնոյի այս հաւատքը Տէրը վարձատրեց իր հրաշալի կերպով: Անիկա ձգեց որպէսզի իր ծառային երիկամունքի — մարմնոյ այս ամենէն զգալուն գործարանին — ցաւը օրէ օր ալելի անտանելի դառնայ, որպէսզի ան իր կեանքի վերջին տարին մարմնոյ անլուր տոռայտանքներով տառապի: Բայց Անիկա օգնեց իր հօր ներգործութեամբ որպէսզի անոր հոգին իբր

ընտիր ոսկի նեղութեան քուրային մէջ հետզհետէ աւելի մաքրուի, զտուի ու փայլի: Այս իրականութիւնը ապացուցանելու համար բաւական է միայն մի քանի հատուածներ թարգմանել Մօնոյի խօսքերէն ու աղօթքներէն:

80 ամեայ բարեկամութիւնի մը, որ իրեն նման մեծ ցաւերու զպրոցին մէջ էր, կը զրէ նա, «Անցեալ շաբաթը մեծ մասամբ բուռն ու անսովոր ցաւերով անցուցի... Բայց կրնամ ձեզի վկայել իմ թանկագին ծեր բարեկամութիւն, թէ ամենէն տառապալից վայրկեաններուն իսկ միշտ մեղմացում մը զգացած եմ, երբ Տէրոջ աղաղակած եմ. յաճախ կը նշմարեմ մարմնական անմիջական թեթեւացում մը: Բայց շատ անգամ ցաւերը կը տեւեն ատեն մըն ալ, սակայն ես կը զգամ թէ իմ ամբողջ էութիւնս, միտքս, հոգիս ու մարմինըս կ'ընկղմի աննկարագրելի, երկնային, հանդըստաւէտ խաղաղութեան մը մէջ, որ՝ ինք հակադրութիւն մարմինիս մէջ մոլեգնող ցաւերուն՝ աւելի յատակօրէն գիտակցութեանս մէջ կը թափանցէ: Այս աւելի մեծ շնորհքի մը արժանանալ չ'նշանակեր...: Եթէ մեր աչքերը յառենք միայն մեր թշուառութեանը վրայ, մեզի համար հանգըստութիւն չկայ. բայց եթէ Յիսուոյ նայինք եւ մեզի ներկայացուած իւրաքանչիւր պատահութիւն գործածենք՝ զԱյն փառաւորելու, այն ատեն կրնանք գէթ ժամանակի մը համար ամէն ցաւի յաղթել այնքան մեծ ուժով մը, զոր ես չեմ կրնար նկարագրել: Ասկէ կը հետեւցնեմ թէ՛ երբ մենք նեղութիւններու մէջ անդադար պատրաստ ըլլայինք Տէրոջ ծառայելու, ապահովաբար մեր սիրտը պիտի լեցուէր ամէն ատեն խաղաղութեան ու համբերութեան անակնկալ չափով մը»:

Շատ անգամ ցաւերը մասնաւոր ուժգնութեամբ կը յարձակէին իր վրան: Այդ ատեններ աւելի մտերմօրէն և անձնատուութեամբ կը կառչէր իր Տէրոջ եւ իր ազաւանքները կը մատուցանէր Անոր բարձրաձայն: Ահա՛ այդ աղօթքներէն մի քանի խօսքեր: «Ողորմէ ինծի Դուս, Որ իմ ցաւերս կը տեսնես, Վիշտերու Մարդը, ողորմէ ինծի՝ Քու թափած արեանդ շնորհիւ. ողորմէ ինծի մինչեւ ի մահ խոնարհելուդ շնորհիւ... ողորմէ ինծի Քու յարութեանդ ու փառալից համբարձմանդ զօրութեամբ. ողորմէ ինծի Քու զըթառատ սիրոյդ եւ Քու ցաւերուդ հազարդակից ըլլալուս համար...»

«Աստուած իմ, Քու ձեռքդ է որ զիս կը հարուածէ: Ի՛նչ սարսափելի է Աստուծոյ այս ձեռքը, ի՛նչ անդիմադրելի, այսու ամենայնիւ օգնե-

լու համար որքա՛ն ամենակարող է աստուածային ձեռքը: Փրկիչ իմ, բժշկէ՛ զիս... բժշկէ՛ զիս, երբ ես բաւականաչափ տառապած եմ, երբ ես եկած եմ այն կէտին որ կրնամ տառապիլ Քու սիրոյդ համար: Ո՛վ Աստուած, ես չեմ տրանջեր, իմ մէջս չկայ նոյնիսկ նեարդ մը որ Քեզի դէմ տրտնջէ, բժշկէ՛ զիս միայն Քու փառքիդ, Քու ծառայութեանդ համար... կամ առ զիս Քու տունըդ, Քու զրկիչ մէջ... Աստուած իմ, Քեզի կ'ըսպասեմ, որչա՛փ երջանիկ եմ որ քեզ կը ճանչնամ, Քեզ յաւիտենական սէր կրնամ կոչել: Հոգիս դէպի Քեզ կը սաւառնի... Ո՛վ Աստուած, Դուս զիս բանի մը եւ մէկու մը ձեռքերուն մատնած չես, միայն Քու ձեռքիդ մէջն եմ: Դուս ես որ զիս Քու խարազանովդ կը պատժես: Զարկ, բայց չափաւորութեամբ. զարկ, բայց սրբացուր, որպէսզի Քու խրատդ ապարդիւն չանցնի, զարկ, բայց այնպէս որ ինծի փրկարար երեւնայ, մինչեւ որ ինծի ուրախութիւն պատճառէ. ցաւերը անցաւոր են, բայց ուրախութիւնը՝ յաւիտենական...»

«Աստուած իմ, Դուս կ'ուզես իմ սրտիս ամենէն խոր հիմունքները փորձել: Դուս կ'ուզես տեսնել թէ Քու ծեր ծառադ, որ զօրութեամբ ու համոզումով պատգամած է թէ հաւատքը ամէն բանի յաղթող ոյժ մըն է, կարող է զայդ իր կեանքովդ ապացուցանելու եւ պատրաստ է կըրելու այն բոլոր, զոր ինքը յաճախ ուրիշներուն ուսերուն վրայ կը դնէր: Արդ, ես կ'առնեմ այդ բոլոր իմ վրաս: Գիտեմ, Դուս ես, Որ այդ սարսափելի ցաւերը ինծի համար ծրագրած ես... բայց գիտեմ նաեւ թէ Դուս իմ Հայրս ես, աչսինքն յաւիտենական Սէրն իսկ... Ըրէ՛ ինչ որ կ'ուզես իմ մահացու մարմնոյս: Բայց իմ հոգիս իմ թշուառ, կողկոճուած, սակայն եւ այնպէս թանկ գնուած ու մաքրուած հոգիս Քու Սուրբ Հագոյդ կը կարօտի՝ չկորուսելու համար: Անկաւանթութի ու ծարաւ է ներկայութեանդ, շնորհքիդ, խաղաղութեանդ, կեանքիդ: Ասոնք չես կրնար Դուս ինծի զլանալ»:

Այսպէս, ամենէն մեծ հաւատքով, համբերութեամբ, անձնատուութեամբ, սիրով եւ նոյնիսկ երախտագիտութեամբ կը տոկար այն ցաւին որ իր բժիշկներուն վկայութեամբ ամենէն ուժգին ցաւն էր, որ իրեն չէր թուլատրեր նոյնիսկ երկու ժամ հանգիստ, անընդհատ քնանալ զիշերուան մը մէջ եւ որ զինքը սոսկալիօրէն կը տառապեցնէր երբ ոտքի կայնէր ու մի քանի քայլ առնէր սենեակին մէջ, երբ կերակուր կ'ուտէր եւ կը խօսէր ու կը զրէր:

Աստուած ալ զինքը կը քաջալերէր զարմանալի կերպերով: Օրինակ, երբ անգամ մը ցաւերը իր վրայ յարձակած էին ամենէն մեծ կատաղութեամբ, իր հոգին ցնձաց յիշելով «Աստուծոյ ժողովուրդին համար հանգիստ մը կայ» խօսքը: Եւ ապա վկայեց իր սիրելիներուն(1), որոնք իր մահիճին քով էին: Թերեւս ես այս հանգիստին աւելի մօտեցած եմ քան որ մենք կը խորհինք, այս խորհուրդը իմ սիրտս ուրախութեամբ կը ցնձացնէ: Ձեզմէ ո՞վ կ'ուզէր որ իմ տանջանքներս աւելի երկարէին: Բայց եւ այնպէս անոնք թող տեսնեն որքան որ Տէրը կ'ուզէ. ով Աստուած ես Քու կամքդ սիրով կը կատարեմ...: Ձեզ հոս թողուլը ինծի մեծ ցաւ պիտի պատճառէ, բայց բաժանումը կարճատեւ է եւ քիչ յետոյ պիտի միանանք յաւիտեանապէս...: Աստուած սէր է: Եւրանելի են այն մեռելները որոնք Տէրոջմով կը ննջեն:

X X X

(1) Անոնցմէ մին եւ մի քանի հատը միշտ ներկայ էր Մօնոյի քով եւ անոնք են որ նօթագրած ու մեզի հաղորդած են Մօնոյի աղօթքներն ու խօսքերը:

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԵՐԿՆԱՅԻՆ ՁԳԵՍՏԸ

Գերի մը եւ իր տէրը միաժամանակ իրենց մեղաւոր ըլլալուն համոզումն ունեցան: Բայց առաջ զերին ընդունեց Աւետարանին մատուցած փրկութիւնը: Երբ Տէրը ասոր մասին իր զարմանքը կը յայտնէր, խեղճ Սամօ պատասխանեց «Տեսէք, Մասա, երբ հրեշտակը ձեզի ճերմակ զգեստ մը բերաւ, ձեզի ըսաւ, ահաւասիկ ըզգեստ մը ձեզի համար: Մասան զիտեց իր ունեցած հագուստները, ուր մի քանի փոքրիկ ծակեր միայն կային, «Ասոնք տակաւին քիչ մը ժամանակ կրնան գործածուիլ», այսպէս մասան չուզեց առնել նոր զգեստը: Հրեշտակը Սամին ըսաւ, «Ահաւասիկ նոր զգեստ մը քեզի համար» եւ Սամ պատասխանեց, «Ո՛հ, իմ հագուստներս ցնցոտիներ են միայն, ես ցնցոտիներով ծածկուած եմ, շնորհակալութիւն»: Եւ ես անմիջապէս նոր զգեստը հագայ:

Մարդիկ կան որ Քրիստոսի շնորհած ձրի փրկութիւնը չեն ընդունիր, որովհետեւ կը կարծեն թէ իրենք արդէն բարի են, արդար են, ի-

րենք ի՞նչ մեղք ունին որ Յիսուս պիտի ներէ, խոստովանելիք բան մը չունին, հետեւաբար իրենց բարութիւնովն ու արդարութիւնովը պիտի կրնան երկինք երթալ: Անոնք կը նմանին Սամին տիրոջ եւ Յիսուսի մէկ առակին մէջի այն մարդուն որ առանց հարսանեկան զգեստ հագնելու, իր հագուստներով հարսանիք գնաց եւ պատժուեցաւ: (Մատթ. ԻԲ):

Փրկութիւն ստանալու համար պէտք է համոզուինք թէ մեր ունեցած բարութիւնն ու արդարութիւնը ցնցոտիներու կը նմանին, եւ մենք մեղաւոր ենք. մինչեւ որ այդ ցնցոտիները, այսինքն մեր բարութիւնը մէկ կողմ չնետենք, չենք կրնար երկինք երթալ: Այդ նոր զգեստը Քրիստոսի տուած արդարութիւնն է: Չայն կը ստանանք երբ հաւատանք թէ Քրիստոս մեր տեղը պատժուած է խաչին վրայ եւ մեր մեղքը ներուած է:

ՅԻՍՈՒՍԸ ՏԵՍՆԵԼ

—Ես Յիսուսը տեսնելու կ'երթամ, Յիսուսը տեսնելու կ'երթամ, կ'ըսէր փոքրիկ սեւամորթ մը որ մեռնելու վրայ էր:

—Աստա՛հ ես որ պիտի տեսնես զԱյն, հարցուց միսիոնարը:

—Ո՛հ, այո, իրեն համար է որ ես կ'ուրախանամ թէ երկինք պիտի երթամ:

—Բայց ենթադրենք թէ Յիսուս երկինքէն երթայ, այն ատեն ի՞նչ պիտի ընես:

—Ուր որ երթայ կը հետեւիմ իրեն:

—Բայց եթէ Անիկա դժոխք երթայ, ի՞նչ պիտի ընես:

Փոքրիկ սեւամորթը մտածեց:

—Մասա, Յիսուսի գտնուած տեղը դժոխք չի կրնար ըլլալ:

Որքան քաղցր է Յիսուսի ներկայութիւնը զգալ մեր քովը, եւ երբ Յիսուսի ներկայութիւնն զգանք, ուրիշ ոեւէ զգացում կրնա՞յ մեզ խոռվել ալլելու: Տարակոյս, վախ, տխրութիւն, անորոշութիւն, վտանգ կրնա՞ն զբաղեցնել մեր միտքը: Չէ՞ որ Յիսուսի ներկայ եղած տեղը դժբախտ կ'ըլլայ: Ուրեմն կարելի է որ մարդ երկնային կեանքի սկզբնաւորութիւնը երկրի վրայ ապրի, պարզապէս հաւատալով թէ Յիսուս իր քովն է ամէն վայրկեան, կը հսկէ իր վրայ, կը խնամէ զայն, կը քաջալերէ, կը զօրացնէ, կը մխիթարէ: Չէ՞ որ ինք անսուտ խոստում տուած է թէ «Ահա ես ձեզի հետ եմ, մինչեւ —շխարհի վերջը»: Ահա այս ներկայութիւնն է որ

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շաբաթակիցի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

Ս ԱՐՍԷՅԼ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպրոց
մանկանց 11 Rue de l'Eclipse

Շաբաթամիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի,
Սէն ժիւլիենի, Սէն Սեբաստիանի, Սէն Մարկրի-
թի, Սէն ժէրոմի Պուվար Օտօի մէջ):

ՍԷՆ ԼՈՒ.—Քարոզիչ Պրն. Վահան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. գրական ուսումնա.

16 ին քարոզածողով:

ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՕԹԱ.— Քարոզիչ' Պրն. Ս. Պագգալեան,
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափագեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷԹ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:
14ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ' Բրոֆ. Գ. Գ. Խայկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ— Հովիւ' Պատ. Ժ. Պարսումեան,
18, Rue du Dr. Rebatel

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւնը
ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԼ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ—Քարոզիչ Պրն. Ի. Աբրահամեան
2. Place de la Pareille.

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով
57 Rue de la République.

17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairie մէջ, Justice de la Paix սրահը.

ԲԱՐԻՋ— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պոտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 2^e

Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին

37 Rue Tournefort Paris 5^e

Metro Moube Aut. K6

Ամսոյն Ա. կիրակիները երիտասարդա-
Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Գ. կիրակիները երիտասար-

դոսեայ Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամսոյն Բ. եւ Գ. կիրակիները Սբ. Գրոց

մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulénaux.

ԱԼՖՕՐՎԻԼ.— Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին Կիր. դաս

ԵՐԳ ՄԸ ՉԱՅՆԱԳՐՈՒԱԾ

«ԲԱՆՔԵՐ»Ի ԱՄԷՆ ՄԷԿ ԹԻՒԻՆ ՄԷՋ

«Բանքեր»ի 1933 տարուան էվերջին թիւին մէջ գրեցինք թէ կը փափաքէինք յառաջիկայ տարին Յունական թիւէն սկսեալ (եթէ կարելի ըլլայ)ամէն մէկթիւի մէջ մէյսէկ ձայնագրեալ հոգեւոր երգ դնել մանկանց սրահակին տակ:

Գրեցինք նաեւ թէ «Բանքեր» չունի նօթայի թիփեր, բայց կրնայ 1500 ֆրանքի գումարով մը այդ անհրաժեշտ պէտքը լեցնել:

Քանի որ այդ գումարը մինչեւ այսօր եկած չէ, «Բանքեր»ի այս թիւը առանց երգի լոյս կը տեսնէ: Այսու ամենայնիւ բարոյապէս ու նաեւ նիւթապէս քաջալերող նամակներ ընդունած ենք, մեր քով գտնուած գումարը 530 ֆրանքի կը հասնի: Կ'ակնկալենք որ 1500 ֆրանքը շուտով գտնուի եւ մանկանց համար մեր ունեցած փափաքը իրականանայ:

Ա՛րդ, եթէ անհատներ՝ կամ եկեղեցիներ նաեւ կիր. դպրոցներ համախմբուելով շուտով լեցնէին այս գումարը, մենք եւս նոյնքան շուտ պիտի կարենայինք հրատարակել երգերը:

Ուստի Բանքերի այս առաջին թիւը առնելուդ, սիրելի ընթերցող, հաճէ մտածել թէ այս մասին պարտականութիւն մը կ'զգա՞ս. եթէ այո, հաճէ չուշացնել:

Ընդունէ մեր սրտագին շնորհակալութիւնները սիրելի մանուկներու կողմէն
ԽՄԲ. ԲԱՆՔԵՐ»Ի

«ԲԱՆՔԵՐ»Ի ԸՆՏԱՆԻՔԻՆ

Այս միջոցիս «Բանքեր» նեղ դրութեան մը մէջ կը գտնուի եւ չկրնար ու չուզեր պարտք ընել:

«Բանքեր»ի ընտանիքէն իւրաքանչիւր անդամ որ սինչեւ հիմա իր բաժնեգինը զրկած չէ, թող հասի յուզարկել առաջին պատեհութեամբ, որպէսզի սենք ալ առանց աւելորդ մտահոգութեան՝ ուրախութեամբ շարունակենք մեր ծառայութիւնը եւ ոչ թէ հաւա. չելով:

Ձերդ շատ սիրով

ԽՄԲ. «ԲԱՆՔԵՐ»Ի